



Հայ Շեքսպիրյան Միությունը (ՀՇՄ) հայտարարում է

Իր հինգերորդ Շեքսպիրյան միջազգային գիտաժողովը՝

«Շեքսպիրը իշխանության, իշխանության չարաշահման և բռնապետության մասին. երեկ, այսօր և վաղը» թեմայով:

«Այն բռնակալը, ում լույս անուրը այժմ խոցում է մեր լեզուն, կար մի ժամանակ, որ ազնիվ էր համարվում»:
Վ.Շեքսպիր, «Մակբեթ» 4, 3

2024 թ. հոկտեմբերի 3-6-ը, մայրաքաղաք Երևան, ՀՀ

Գիտաժողովը կազմակերպված է Հայաստանում Ամերիկյան Համալսարանի (ՀԱՀ), Հումանիտար և սոցիալական գիտությունների քոլեջի և Երևանի Պետական Համալսարանի (ԵՊՀ, Արտասահմանյան գրականության ամբիոնի) հետ համատեղ:

Գիտաժողովին զեկուցումներով կարող են մասնակցել թատերագետներ, շեքսպիրագետներ, գրականագետներ, բեմադրիչներ, արվեստաբաններ, ասպիրանտներ և մագիստրատուրայի ուսանողներ:

Չեկուցումների համար առաջարկվում են հետևյալ պանելային քննարկման առանցքները (հավելյալ քննարկման թեմաները ողջունելի են՝

- Շեքսպիրը և նրա ժամանակակից թատերգակները՝ միապետության և բռնության մասին (իրենց պատմա-քաղաքական, սոցիալական և մշակութային համատեքստում և ենթատեքստում):
- Շեքսպիրի թատերգությունների ազդեցությունը 18-րդ և 19-րդ դդ. ազգային մշակույթների վերածնունդի գործընթացին Եվրոպայում և այլուր: Շեքսպիրի ստեղծագործությունների մեկնաբանումները, թարգմանությունները և բեմադրությունները՝ բռնակալության, գրաքննության և ազատության սահմանափակումների մթնոլորտում:
- Շեքսպիրի թատերգությունները կինոյի, բալետի, օպերայի և թատրոնի ասպարեզում՝ 20-րդ դարի քաղաքական-հասարակական գերիշխանությունների պայմաններում:
- Հայացք դեպի ապագան. շեքսպիրյան ժառանգության արդիականությունը նոր սերունդների դիտակետից (մասնավորապես ողջունելի է երիտասարդ մասնագետների մասնակցությունը՝ հայ ուսանող-հետազոտողների հետ համագործակցելու միտումով):

Գիտաժողովին մասնակցելու դիմումագիրը՝ զեկուցման սեղմագրի (250 բառ) և հակիրճ կենսագրության (100 բառ) հետ մեկտեղ, ուղարկել **մինչև հունիսի 30-ը:**

Դիմումագիրը ստանալու համար գրել՝ asassociation400@gmail.com

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելել ՀՇՄ-ն կայքը՝

www.armenianshakespeare.org

Ֆեյսբուք՝ facebook.com/ArmenianShakespeare

Twitter twitter.com/ArmShakespeare

կամ զանգահարել WhatsApp-ով՝ + 37494778817 (ՀՀ) կամ +447983022332 (ՄԹ)

Հայ Շեքսպիրյան Միության գիտաժողովի կազմկոմիտե